

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԲ Ս. ՔԱՂԱՔԻՄ ՄԷՋ

ԱնցԼալ տարուան նման, այս տարի եւս, 21—28 Յունուարի միջնեւ, էկեղեցիներու Միութեան նօթնեակը նշուեցաւ պատշաճ հանդիսաւորութեամբ, Ս. Քաղաքիս մէջ իր ներկայացուցիչները ունեցող Քրիստոնէական եկեղեցին անդամներուն կոզմէ :

Առաջին ազօթաժողովը տեղի ունեցաւ 21 Յունուար, Կիրակի երեկոյ-  
եան ժամը 6ին, Անկիխաններու Աէջնիթ ձօրը եկեղեցին մէջ : Զանուարն յեղու-  
ներով կատարուած Ս. Գրական բնթերցումներէ և երգեցազութիւններէ եար, Գերչ. Տ. Շահէ եսպ. Աձէմեան խոսեցաւ եկեղեցիներու միութեան վսիմ ու  
որրազան զաղափարին չուրչ, Եղբակացներու թէ սիրոյ և իրարհասկացուու-  
թեան ճամբար միայն կարելի պիտի ըլլայ իրագործել երկար դարերէ ի վեր  
բարձացուած միութիւնը Քրիստոնէական եկեղեցիի զանազան շարժումնե-  
րուն միջնեւ :

Երեքարթի, 23 Յունուար, Երեկոյեան ժամը 5ին, բազմութիւն մը  
լցուցած էր Լուսերականներու եկեղեցին, ուր մեծ մասմբ գերմաներէն լեզ-  
ուով երգուած հոգեւոր երգերէ, Ս. Գրական բնթերցումներէ և Տէրունական  
Ազօթիք մէկնարանութեան նուիրուած բնթերցումներէ եար, Հայր Միւրէյ Ռո-  
ճրոս, Անկիխան եկեղեցիէն, ներկայացուց անհրաժեշտութիւնը քրիստոնէա-  
կան միութեան, մանաւանդ ներկայ օրերուն, հակազգելու համար եկեղեցին  
սպառնացող վտանգներուն :

Մեր կողմէ ներկայ էին Գերչ. Տ. Շահէ եսպ. Աձէմեան և Հոգչ. Տ.  
Պարէտ Վրդ. Երեցնան, որոնք ապա, այլ հիւրերուն հետ, մասնակցեցան ե-  
կեղեցին սրահին մէջ տրուած ընդունելութեան :

Հոգչ. Տ. Պարէտ Վարդապետ ներկայ եղաւ նաև յաջորդ երեկոյ (Չո-  
րեքարթի, 24 Յունուար) Միոն յերան Տորմիսիոններու վանքի եկեղեցին մէջ  
տեղի ունեցած ազօթաժողովին, և Հայերէն յեղուով Ս. Աւետարանի բնթեր-  
ցումը կատարեց : Անկիխան եկեղեցիի Երկցն Երէն մին խոսք առնելու, մադ-  
թեց որ Աստուած ընդունելի ընէ ազօթքները եկեղեցիներու միութեան հա-  
մար՝ մասուցուած դրացնութեանը մէջ Միոնի այն վերնատան՝ ուր Պէնուեկոս-  
տէի օրը Ս. Հոգիին իիմամբ հիմնուեցաւ քրիստոնէական սուաջին եկեղեցին :  
Հաւաքոյթին ներկայ էր Լատինաց Պատրիարք Մօնս. Տ. Ճիւաքօս Պէլթրիթի,  
որ Երեկոյթը փակեց միութեան համար տարուած ջանքերը օրհնարանող ա-  
ղօթք—մաղթանքով :

Յիշեալ հաւաքոյթներու ամենէն խորհրդաւորն էր սուկայն յաջորդ  
օրուան (Հինդշարթի, 25 Յունուար) Երեկոյեան ժամը 6ին, Ս. Յակովեանց  
Մայր Տաճարին մէջ կատարուածը (առաջին անդամն էր որ Ս. Հրեշտակապե-  
տաց եկեղեցիի փոխարէն Մայր Տաճարը կը տրամադրուէր սրբազան այդ նր-  
պուսակին) : Ժամանակէն առաջ բազմութիւն մը փութացած էր տեղ ապահո-  
վել Տաճարին մէջ :

Տուրք 40 վայրկեաններու բնթացքին, խորհրդաւոր կիսամութիւն  
մէջ, եկեղեցիի կամարներուն տակ լսուեցան բազմաթիւ լեզուներով ընթեր-  
ցումներ և «Եկեղէ»ի կարգին յատուկ հոգեկմայլ մեղեդիներ : Յարտագրին  
մաս առին Հայր Հանհան Հատտատ, Արար Լուսերական, Հայր Ռաֆիք Ֆա-  
րաչ, Արար Անկիխան, Հայր Իկնազի Մանչինի՝ Թրանսիսկեան, Հայր Բայր-  
հարա Շիւալէրթ, Գերման Կաթողիկ: Խսկ Ս. Աւետարանը կարգացուեցաւ հինգ  
տարրեր լեզուներով : Հայր Պարէտ՝ Հայերէն, Արշիմանտրիթ Քօրնէլիուս Ռօ-  
պուսաքիս՝ յունարէն, Արար Անկիխան եպիսկոպոս Նէճիզ Քուալէյն՝ արտ-

բերէն, Հայր Շարլ Քոււանօն՝ Փրանսերէն եւ Բրօրաթ Կլաթթ՝ գերմաներէն։  
Հողէ. Տ. Մուշել Արեղայէ արտասանուած «Որդի Աստուծոյ» նարեկացիի զոհար աղօթքէն ետք, Շնորհալիի «Հաւատով խոստովանիմ» էն տուներ կարգացուեցան, զարձեալ զանազան լեզուներով։ Հայերէն՝ Տ Գեղամ Մ. Վարդապետէ, արարերէն՝ Աւարակիր Կարապետ Յակովեանէ, անգլերէն՝ Ժառ. Վարժարանի անդիւրէն լեզուի դասախօս Տէ լիլա Քրիստի, Փրանսերէն՝ Հայր Վարժարանէ, զերմաներէն՝ Հայր Բիբարնորէ եւ իտալերէն՝ Ֆրանսիսկան Միարանութեան անդամ Հայր Բարսեղ Թայրաթինեանէ։

Օրուան քարոզիչն էր Լուտերական էկեղեցիի պետ Փրօփոթ Հերմութ Կլաթթ, որ անգլերէն լեզուով և Հակիմ կերպով քացատրեց կարեւորութիւնը Էկումենիկ շարժումնն, եկեղեցիներու մերձեցման տևակիտէն։

Դերէ. Տ. Շահէ Եպիսկոպոսի «Փառք քեզ Տէր» աղօթքի արտասանութեանէն ետք, Պապական նուիրակ Մօնս. Փիո Լակիի օրհնութեամբ փակուեցաւ յոյժ ապաւորիչ այս երեկոյթը։

Ուրբաթ Երեկոյ, Սիոնի վերնատան մէջ խմբական եւ լուկէայն Հաւաքոյթ մը տեղի ունեցաւ, իսկ Շարաթ երեկոյ՝ Թանթուրի կկումէնական նարաբաց կեղրոնին մէջ, ուր նմանապէս չեշտուեցաւ բարիքը եկեղեցիներու համադորժակցութեան եւ առաւել մերձեցման։

Եղրափակիչ զոյտ հանդիսութիւնները կատարուեցան Կիրակի, 28 Յունուարին: Առաջինը տեղի ունեցաւ կէսօրէ առաջ ժամը 11ին, Ֆրանսիսկականներու վանքի եկեղեցիին մէջ: Հայ Կաթոլիկ Համայնքի մէծաւորը՝ Գերյ. Տ. Յովհաննէն Մ. Վ.րդ. Կամսարական մատոյց Հայածէս Ս. Պատարազ: Երկու դպրաց գտոր, Պրն. Վահէ Գալայճեանի ղեկավարութեամբ, Կոմիտասեան պատարազի գանը մեղեղիները հնչեցուց օտար եկեղեցիի կամարներուն ներքեւ: Քարոզեց Մարոնիթ համայնքի մէծաւորը՝ Մօնս. Իլիոս Խղիատէ, գովարնելով եկեղեցիներուն՝ իրարու մօտ զայլու ազնիւ տրամադրութիւնը։

Նոյն երեկոյ ժամը 5·30ին, ժողովուրդի կոկիկ բազմութիւն մը, տարրեր յարանուանութիւններէ ու զամակարգերէ, լեցուցած էր Շմիթ աղջկանց դպրոցի սրահը։

Հողէ. Տ. Պարէտ Վարդապետի բացման խօսքէն ետք, մօտ Երկու ժմէկ տեւող եւ Երկու մասերէ բազկացած կրօնական զեղարուեստական յայտագիր մը զործադրուեցաւ: Մաս առին Յոյն Օրթոսոքս, Ֆրանսիսկեան, Հայ եւ Աւետարանական—Անկլիքտան եկեղեցիներու երդչախումբերը: Նախ բնմ բարձրացաւ Յունաց ժառանդաւորաց վարժարանի զպրաց գասը, որ Տօքթ. Ճիօրծիասի ղեկավարութեամբ երգեց զոյտ մեղեղիներ: Ապա՝ Ֆրանսիսկեանք, որոնք բացի կրօնական Երգերէ, Երգեցին սպաններէն ժողովրդական երդ մը: Պր. Սահակ Գալայճեանի ղեկավարութեամբ ժառանդաւոր սաներ Երգեցին «Խորհուրդ մէծ», «Մէծացուսցէ» եւ «Այսօր տօն է Մուրը Ծննդեան»: Աւետարանական Երգչախումբը, Սկովտական եկեղեցիի զպրապետ Պր. Ճէյմս Մանուքնի ղեկավարութեամբ երկու հոգեւոր երգ երգեց։

Հանդէսի Երկրորդ մասին սկիզբը Յոյն Արարներու Ս. Յակոր եկեղեցիի երդչախումբը հանդէս եկաւ, արտաքոյ յայտագրի Երդիլով Յոյն եկեղեցիի զեղեցիկ շարականներէն մին՝ արարերէն լեզուով: Յետոյ Լատիններ, Հայեր եւ Աւետարանականներ յաջորդաբար բնմ Ելլելով ներկաներուն մատուցին ժողովրդական իրենց երած շտութենէն պատառիկներ: Լատինք արտասանեցին Ս. Փրանկիսկոսի Հոչակաւոր աղօթքը: ՄԵրինները Երգեցին «Հայաստան»ը: Տէն. Շաքէ Գալայճեան մէններգեց զարձեալ արտաքոյ յայտագրի, դաշնակի ընկերակցութեամբ իր ամուսնոյն՝ Պրն. Վահէ Գալայճեանի։

Ժամը 7ին փակուեցաւ անմոռանալի այս երեկոյթը։